**Նոտարական ակտի կոդ:** 619-20170227-88-1006763
**Նոտարական ակտի գաղտնագիր:** Y2X0UD

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

30.11.2011թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2958 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

*ՀՀ ք. Նոյեմբերյան*
*Երկու հազար տասնյոթ թվականի փետրվարի քսանութին* 28/02/2017

**Նոյեմբերյանի համայնքապետարանը,** պետական գրանցամատյանում բյուջետային հիմնարկի (կազմակերպության) գրանցման (հաշվառման) վկայական N 01Բ1082424, տրված 28.10.2016թ., հասցեն՝ ՀՀ ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, ՀՎՀՀ՝ 07619196, Հ/Հ՝ 900395101091 այսուհետ ,,Կողմ-1,, ի դեմս համայնքի ղեկավար՝ **Կարեն Հովիկի Աբազյանի,** ծնված 10.03.1976թ., ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, սեռը՝ արական, անձնագիր 000056291, տրված 22.11.2012թ. 047-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ ք. Նոյեմբերյան, Կարախանյան 1 (մեկ) հասցեում, որը գործում է ՀՀ օրենսդրության, կանոնադրության, թիվ 40 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 23.09.2016թ. թիվ 73-Ա և 28.02.2017թ. թիվ 24-Ա որոշումների հիման վրա և որի անունից համաձայն 28.02.2017թ.-ին տրված լիազորագրի հանդես է գալիս **Արմեն Յուրիկի Մելիքյանը,** ծնված 20.08.1973թ. ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, սեռը՝ արական, անձնագիր AM0328816, տրված 08.06.2011թ. 047-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Թումանյան 4 (չորս) հասցեում, մի կողմից և **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ,** իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանման հիմնարկի հաշվառման վկայական 01Բ1042303, տրված՝ 17.03.2016թ., գրանցման համարը՝ 286.185.892303, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Խորենացու թիվ 3,7, ՀՎՀՀ՝ 02647057, Գանձապետական բյուջետային Հ/Հ՝ 900371000531 այսուհետ ,,Կողմ-2,, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ **Արտակ Սարիբեկի Սահակյանի,** որի անունից համաձայն 17.02.2017թ. տրված թիվ 1/18-2/5323-17 լիազորագրի հանդես է գալիս **Մխիթար Բաղիշի Ղազարյանը,** ծնված 14.10.1979թ., ծննդավայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաքացիությունը՝ Հայաստանի Հանրապետություն, սեռը՝ արական, անձնագիր AK0655603, տրված 12.11.2010թ. 047-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Տավուշի մարզ, գ. Բերդավան, 5-րդ փող., 1-ին փկղ., տուն 4 (չորս) հասցեում, մյուս կողմից, այսուհետ ,, Կողմեր,, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 30.11.2011թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2958 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 5.1 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1. Պայմանագրի 5.1. կետը, որը փոփոխվել է 23.11.2016թ. սեղանամատյանում թիվ 2079 համարով գրանցված պայմանագիրը լրացնելու և փոփոխելու մասին կնքված համաձայնագրով, շարադրել հետևյալ կերպ.

*Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 23.11.2020թ. և ուժի մեջ է մտնում սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ համապատասխան տարածքային ստորաբաժանումում իրավունքների գրանցման պահից:*

1.2.Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի, որը հանդիսանում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

1.3. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2017թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

## 2. Այլ պայմաններ

2.1. 30.11.2011թ. կնքված և սեղանամատյանում թիվ 2958 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Մեկ օրինակ մնում է «Նոյեմբերյան» նոտարական տարածքում:

2.3. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի կողմից այն ստորագրելու պահից:

2.4 **Սույն համաձայնագիրը ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր ՊԵԿ պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:**

ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հավելված 1

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Աշխատանքի անվանումը | Վճարման ենթակա ամիսները | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծառայության անվանումը | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| Ք.Նոյեմբերյան, Երևանյան 4 հասցեում գտնվող վարչական շենքից 44.02 քմ տարածքի վարձակալության ծառայություն | 22010 | 44020 | 66030 | 88040 | 110050 | 132060 | 154070 | 176080 | 198090 | 220100 | 264120 | 264120 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

[illegible]

[illegible]



